

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ աբղ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եթէ ոք ծարաւ իցէ, եկեսցէ առ իս և արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

Ս. պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը հոգևոր ճեմարանի Բ լուսարանի ուսանող Սորին Մանդալյանին սարկավագ է ձեռնադրում, ինչպես նաև Սերոբ Տերտերյանին:

Սորին Մանդալյանը ծնվել է 1954 թ. Ռումինիայի Մեդյաշ քաղաքում: Սովորել է Բլաժ քաղաքի Յակոբ Մոռեշյանուի անվան միջնակարգ դպրոցում: 1973 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Սերոբ Տերտերյանը ծնվել է 1951 թվականին Էջմիածին քաղաքում: Ավարտել է տեղի № 7 միջնակարգ դպրոցը: Այժմ աշխատում է Մայր տաճարում որպես լուսարարի օգնական:

*
* *

Փետրվարի 6-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 16-ին, Մայր Աթոռ է այցելում Մոսկվայում Ֆրանսիական հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժակ Վիմոնին՝ իր տիկնոջ հետ:

Մայր տաճարի առաջ հյուրերին դիմավորում են տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ու տ. Թորգոմ աբղ. Մուշեղյանը: Հարգելի հյուրերը, Մայր տաճարն ու եկեղեցական արվեստից թանգարանը դիտելուց հետո, հրաժեշտ են առնում լավագույն տպավորություններով:

*
* *

Փետրվարի 8-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ աբղ. Մուշեղյանը:

*
* *

Փետրվարի 13-ին, ուրբաթ.—Այսօր Մայր տաճարում, հավարտ ժամերգության, կատարվում է նախատոնակը Տյառընդառա-

ջի, Քրիստոսի քառասնօրյա տաճար գալլստյան տոնի, և տեղի ունենում անդաստանի արարողություն:

Ժամը 19.30-ին հոգևոր ճեմարանի հանրակացարանի բակում բոցավառվում է ավանդական խարույկը, որի շուրջ տեղի են ունենում ճեմարանի ուսանողության երգն ու պարը:

*
* *

Փետրվարի 14-ին, շաբաթ.—Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Փետրվարի 15-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

Փետրվարի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետը Կիսլովոդսկի հանգստավայրից Մայր Աթոռ է վերադառնում: Նորին Սրբությանն ուղեկցում էր տ. Տիրան աբդ. Կյուրեղյանը:

Մայր Աթոռի միաբանությունը Երևանի օդանավակայանում դիմավորում է Նորին Սրբությանը և առաջնորդում Մայր Աթոռ:

*
* *

Փետրվարի 22-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ աբդ. Մուշեղյանը:

*
* *

Փետրվարի 24-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: Հատենի ժողովի Նորին Սրբությունը հայտնում է, որ վերջերս ս. Ղազարի Մխիթարյան վանքում պատահած մեծ աղետի առիթով Ինքը որոշել է 5000 դոլլարի նվիրատվություն կատարել հիշյալ՝ ս. Ղազար վանքի վերակառուցման համար:

Գերագույն հոգևոր խորհուրդը գոհունակությամբ է արձանագրում Հայոց Հայրապետի այս նվիրատվությունը:

*
* *

Փետրվարի 28-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ է այցելում Ռումինիայի հանրապետության վարչապետ պրն. Մանիա Մանեսկուն: Հյուրին ուղեկցում էին Հայաստանի հանրապետության պաշտոնական անձերից մի խումբ: Մայր Աթոռում հյուրերին դիմավորում են դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Մամբրե վրդ. Մարգարյանը և տ. Մասիս վրդ. Գալստյանը:

Հյուրերը Մայր տաճար ու եկեղեցական արվեստից թանգարան այցելելուց հետո առաջնորդվում են Վեհարան, որտեղ հարգելի հյուրին և նրան ընկերակցող պետական անձնավորություններին ընդունում է Հայոց Հայրապետը:

Ապա Նորին Սրբության և մեծահարգ հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Ընդունելությանը ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը:

Հարգելի հյուրը հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

*
* *

Փետրվարի 29-ին, կիրակի.—Բուն բարեկենդան.

Մայր տաճարում, փակված խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը՝ Մեծ պահոց հոգևոր ու բարոյական նշանակության մասին հավատացյալների կյանքում՝ «Ով է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ» (Սղմ. ՁԸ 49) բնաբանով: